


ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
ACADEMIA ARMENA SANCTI LAZARI

Խմբագրությունն իրաֆանչիւր յօդուածի հեղինակին կը թողու արտայայտուած գիտական կարծիքներու պատասխանատուութիւնը, գնահատելով հանդերձ հետազօտական մակարդակի վրայ իրաֆանչիւրին ներքին արժէքը:

La Rédaction laisse aux différents auteurs la responsabilité des opinions exprimées dans leurs articles, sans vouloir préjuger de la valeur intrinsèque de ces derniers au niveau de la recherche.

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլբենկեան Հիմնարկութեան» միջոցով
Publié avec le concours de la «Fondation Calouste Gulbenkian»



20-33

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ – ARTICLE DE FOND

ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՀԵՏՔԵՐՈՎ

Այս վերջին տասը տարիները՝ յատկապէս բնդում շրջան մը արձանագրեցին միջազգային հայագիտութեան ատենագրութիւններուն մէջ: Այս դրական հաշուեկշիռին ամէնէն ցայտուն նշանակութիւնը եւ կարեւորագոյն ազդակներէն մէկը հանդիսացան ամստարակոյս հայագիտական միջազգային այն բազմաթիւ եւ բազմօրինակ հանդիպումներն ու ժողովները, որոնք իրարու յաջորդեցին յիշեալ ժամանակաշրջանին մէջ սրբնքաց թափով մը:

Դեռ վաթսնական թուականներուն՝ Հարվըրտի մէջ կայացած էր առաջին հայագիտական հանդիպում մը, զոր կարելի է իբր նախընթաց մը նկատել՝ յաջորդող տասնամեակի ընթացքին միեւնոյն ուղղութեամբ երեսն եկած եռուն գործունէութեան:

Մեր դիտաւորութենէն դուրս է՝ այստեղ լրիւ մէկ ցանկը ներկայացնել խնդրոյ առարկայ հանդիպումներուն եւ ժողովներուն: Սակայն, աւելորդ չենք համարիր յիշել ատենցմէ ումանք՝ իբր մտայն՝ պարզապէս աւելի շօշափելի դարձնելու համար մեր խօսքը, առանց որ այս թուարկումը՝ մեր կողմէ առաւելագոյն գնահատումի դիրքորոշում մը ներփակէ: Հայ արուեստի միջազգային երեք սիմպոզիումները (Պերկամոյ 1975, Երեսն 1978, Վիլնիւս 1981), Հայ լեզուաբանութեան սիմպոզիումը (Ֆիլատելֆիա 1979, Երկրորդը տեղի պիտի ունենայ Երեսն ընթացիկ տարուան Սեպտեմբերին), սիմպոզիումը Հայ-Ասորական առնչութիւններու մասին (Տրմպարքըն Օֆս 1980), միայն մի քանի օղակներն են այն շղթային՝ որոնք բոլոր մեծ կամ մանր օղակներուն թուումը բաւականաչափ պիտի երկարէր:

Բնականաբար, երբ կը խօսուի կազմակերպչական բնոյթ կրող որեւէ ձեռնարկի մասին, ինչպէս ին յիշեալ հաւաքոյթները, առաջին հարցերէն մէկը՝ որ կը ներկայանայ՝ կը վերաբերի ուղղակի կազմակերպչական տեսակետին, այլ բաներով՝ կազմակերպութեան որակին: Մեր գլխաւոր նպատակէն դուրս կը մնայ խորանալ ներկայիս այդ հարցին մանրամասնութիւններուն մէջ, որոնց քննութեան

լաւագոյն ասպարէզը առանձնակի գրախօսութիւնները կը կազմեն: Պիտի գոհամանք միայն ընդհանուր նկատողութեամբ մը՝ թէ այդ հանդիպումներու ընթացքին, յաճախ կարելի չէ եղած պահել ժամանակի հաւասարակշիռ բաշխում մը ընդմէջ գեկուցումներու ընթերցման եւ գեկուցուած նիւթերու շուրջ կարծիքներու փոխանակութեան, ինչ որ կարելի էր հարց մը նկատուելու է նման հաւաքոյթներու մէջ: Այլապէս, կը խորհիմք թէ խնդրոյ առարկայ հանդիպումները — որոնցմէ շատերուն իր մասնակցութիւնը բերած է նաեւ Ս. Ղազարու Ակադեմիան —, կազմակերպչական գետնի վրայ, ընդհանուր առմամբ, դրական ելոյթներ ունեցած են:

Ինչ կը վերաբերի այս ձեռնարկներուն յարուցած արձագանքին, հայ մամուլին, հայ հանրային կարծիքին ու մերթ ևս օտարներու մօտ, կատարած չկայ թէ այդ արձագանքը գրեթէ միշտ դրական ու բարձրօրէն դրական եղած է: Ասով հանդերձ, աւելորդ չէ թերեւս նշել միաժամանակ՝ թէ բոլորովին պակասած չեն վերապահ արտայայտութիւններ, թէպէտեւ ֆողարկեալ բանաձեւումներով: Յատկապէս, ինչ ինչ շրջանակներու մօտ «տեսական» կամ «ակադեմական» գործունէութիւններու նկատմամբ յայտնուող յագեցածութեան, ձանձրոյթի, յուսախարութեան տրամադրութիւնները հաւանօրէն գլխաւոր ազդակներն ըլլան այդ որոշ չափով վերապահ կեցումաձեւներուն: Սակայն, մեր հաստատ համոզումն այն է որ, եթէ երբ եւ իցէ ակադեմական գործունէութիւնները յայտնաբերած են մեր ազգային կենսական հարցերուն նկատմամբ անբաւարարութեան կամ սովորութեան ախտանիշներ, նման կացութեան մը բարւոյն կամ բուժումին համար՝ երբեք իմաստութեան թելադրանք մը պիտի չըլլար յիշեալ գործունէութիւններուն հանդէպ որդեգրուելիք արմատապէս հերքողական կամ բացասական դիրք մը, որ՝ ինչպէս ամէն ծայրայեղութիւն՝ ո՛չ միայն երկդիմի, այլ նաեւ վտանգաւոր կը դառնայ: Որեւէ մշակոյթ, որ կ'ուզէ գոյատեւել, որ կ'ուզէ ապրիլ, որ կ'ուզէ մանաւանդ չտողակիլ միջակութեան, տափակութեան, կաղապարուած լոգուններու գետնաշարքակին վրայ, այլ ընդհակառակն վառ պահել միշտ նորոգելու եւ նորոգելու կենսունակութիւնը, անհրաժեշտ կարիքն ունի յեմլու գիտական խորարարական կառոյցի մը ու տեսականօրէն սղանակելու անկէ՝ իրրեւ կենսաւիշ կորիզէ մը: Գիտածողութիւնը, որ պատրաստուած ըլլան պահանջուած լրջութեամբ եւ երաշխաւորուած՝ իրենց կազմակերպչներուն եւ մասնակիցներուն ձեռնհասութեամբ, մշակոյթի մերօրեայ միջազգային իրադրութեան մէջ, անտարակոյս, վաւեր ու կարեւոր ազդակներէն մէկը կը կազմեն յիշեալ կառոյցին եւ կորիզին պահպանման եւ ուղեւորումին համար:

Այս հիմնական նախադրեալէն ետք, նկատի առնեմք հարց մը՝ զոր կը դնէ, մեր կարծիքով, հայագիտական հանդիպումներու վերեւ

նշուած յարաճուն թափը: Եթէ մէկ կողմէ խնդրութեամբ ողջունելի է այս երեւոյթը, միւս կողմէ՝ սակայն՝ չէ կարելի չնշմարել կարիքը այդ բոլոր ինքնաբերական ձեռնարկներուն միջեւ առաւելագոյն համակարգումի եւ աւելի մեթոտիկ ծրագրումի մը, ինչպէս նաեւ աւելի սերտ գործակցութեան մը՝ ամենց նախաձեռնարկ հանդիսացող անձներուն եւ մարմիններուն միջեւ: Եթէ նման կարիք մը գոյութիւն ունի եւ կը գագաթնի, ասիկա գուցէ նշան մըն է ինքնին՝ թէ այսօր հասունացած է արդէն պահանջը միջազգային հայագիտական ընկերակցութեան մը կազմութեան, այնպէս՝ ինչպէս գոյութիւն ունի, օրինակի համար, բիւզանդագիտութեան միջազգային ընկերակցութիւնը: Այն իրողութիւնը՝ թէ հայագիտութիւնը այլեւս ճանչցուած է բոլորէն իբր գիտական անկախ եւ ուրոյն միւլ մը, զոր կարելի չէ վերածել՝ բիւզանդագիտութեան կամ իրանագիտութեան նման մերձակայ գիտութիւններու բնագաւառի մը վիճակին, արդէն բաւարար հիմք կ'ընծայէ հայագիտական միջազգային ընկերակցութեան մը կազմութեան: Ծանօթ է որ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ կը գործէ արդէն հայագիտական ընկերակցութիւն մը. կը շրջին ձայներ՝ Եւրոպայի մէջ ալ նման ընկերակցութիւն մը ձեւացնելու ուղղութեամբ: Իսկ հայրենի սահմաններուն մէջ՝ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիան, հայագիտութեան հայոց իր բոլոր միւլաւորումներով, հայագիտական հայրենի այլ հաստատութիւններու հետ միասին՝ ոչ միայն կը լրացնեն վաւեր եւ գործօն ընկերակցութեան մը բոլոր պահանջները, այլ նաեւ կը ներկայացնեն վերաբերումի անհրաժեշտ եզր մը՝ միջազգային ընկերակցութեան մը կազմաւորումին համար: Ուրեմն, այնպէս կ'երեւի թէ, նոյնիսկ գործադրութեան գետնին վրայ, նման գաղափարի մը հետապնդումը, այսօր, կը գտնէ արդէն բաւական պատրաստ հող մը:

Մեր կարծիքով, հայագիտական ուսումներու ներկայ հանգրդունանին, ամէնէն կարեւոր պահանջներէն մէկն է այս, որուն իրագործումը, վստահ ենք, ոչ միայն պիտի բերէ անհրաժեշտ նպաստը՝ միջազգային գետնի վրայ հայագիտական ձեռնարկներու լաւագոյն համակարգումին եւ հայագէտներու միջեւ աւելի սերտ գործակցութեան, այլ նաեւ մեր գարկ պիտի տայ հայագիտական ուսումներու բարգաւաճումին, մանաւանդ շատ աւելի ամուր երաշխիք մը պիտի ընծայէ արտասահմանեան հայագիտութեան սպազային համար:

ԽՄԲ.